Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **31.03.2023թ. ժամը 12.00**

Նիստը նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 8 անդամներից 6-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանը, մարզպետի խորհրդական Սասուն Սահակյանը, մարզպետի օգնականներ Մանանա Գալստյանը և Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները, «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն Արտաշ Սարդարյանը և «Գեղամա աշխարհ» մարզային թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանը:

Օրակարգում՝

1. **2023 թվականի մարտի 27-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային բյուջեների գործընթացի կազմակերպման մասին:**

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականի գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման մասին:**

   /Զեկ. Մարտին Պետրոսյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակների վերապատրաստման և 2023 թվականի համահայկական 8-րդ խաղերի մասնակցության նախապատրաստական աշխատանքների մասին:**

   /Զեկ. Կարեն Զազյան մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

4. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացվող աշխատակազմերի ձևավորման, աղետների ռիսկի կառավարման և իրականացվող իրավական ու մասնագիտական հսկողության աշխատանքների մասին:**

   /Զեկ. Վանիկ Հարությունյան - մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ/

5. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ավտոճանապարհների եզրերին իրականացվող ապօրինի շինարարական՝ հողային լիցքի և հարթեցման աշխատանքների և համայնքներում 2023 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մասին:**

   /Զեկ. Գևորգ Խաչատրյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող/

6. **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում առկա առողջապահական խնդիրների մասին:**

   /Զեկ. Լուսինե Վարդանյան - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ/

7. **Այլ հարցեր:**

Հայտարարությամբ հանդես եկավ՝
Արտաշ Սարդարյանը - «Գեղարքունիք» ՋՕԸ գործադիր տնօրեն

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

1. **Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարների հետ՝ համայնքների 2023 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, տեղական տուրքեր, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման համամասնություններով պահանջվող ցուցանիշներն ապահովելու համար.

2) համայնքապետարանների համապատասխան մասնագետների միջոցով տարվա ընթացքում առնվազն երկու անգամ մշտադիտարկումներ իրականացնել 2022 թվականին ավարտված և երաշխիքային ժամկետների մեջ գտնվող սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ, թերություններ հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ և արդյունքների մասին յուրաքանչյուր մշտադիտարկումից հետո եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել մարզպետի աշխատակազմ.

3) մարզի համայնքների կողմից **սուբվենցիոն ծրագրերի համար հայտարարված մրցույթների ավարտից հետո** մարզպետի աշխատակազմ տեղեկատվություն ներկայացնել տեխնիկական հսկողությունն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ.

4) որակը և պայմանագրով սահմանված ժամկետներն ապահովելու նպատակով մարզի համայնքապետարանների հանմապատասխան մասնագետների կողմից իրականացնել մշտադիտարկումներ այլ գերատեսչությունների կողմից համայնքում առողջապահական հիմնարկների, կրթական հաստատությունների և մանկապարտեզների կառուցման կամ վերանորոգման աշխատանքների վերաբերյալ.

5) աջակցել համայնքների ազգաբնակչությանը՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու համար.

6) մարզում ոռոգման սեզոնին պատշաճ նախապատրաստվելու համար համագործակցել «Գեղարքունիք» ՋՕԸ-ի հետ՝ համայնքների ոռոգման համակարգերն աղբից մաքրելու, պոմպերը և պոմպակայանները վերանորոգելու աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու, համայնքապետարանների և ընկերության կողմից գույքագրված խնդիրները համատեղ լուծելու համար.

7) աշխատանքներ տանել համայնքների տարածքներում գործող ԲՄԿ-ներին տարածքներ տրամադրելու և պայմանագրեր կնքելու գործընթացը սեղմ ժամկետում ավարտելու համար.

8) վերազինման նպատակով աջակցել համայնքների բնակավայրերում գործող ԲՄԿ-ներին.

9) ապահովել մարզի համայնքապետարանների, համայնքների տարածքներում գործող առողջապահական և կրթական կազմակերպությունների, պետական մարմինների տարածքային ստորաբաժանումների, տնտեսվարող սուբյեկտների և ազգաբնակչության

ակտիվ մասնակցությունը 2023 թվականի ապրիլի 22-ին կազմակերպվող մարզային շաբաթօրյակին.

10) ապահովել համայնքների լավագույն մարզիկների ակտիվ մասնակցությունը /համայնքային թիմեր/ 2023 թվականի օգոստոսի 5-19-ը անցկացվող Համահայկական 8-րդ խաղերին.

.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

X

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ